

Ո՞ր դեպքում է «շտապօգնության» ծառայության միջոցով բժշկական կենտրոն տեղափոխվող հիվանդի բուժօգնությունն իրականացվում անվճար

«Շտապօգնության» ծառայության միջոցով պացիենտների հոսպիտալացումն իրականացնում է կյանքին վտանգ սպառնացող և անհետաձգելի հիվանդանոցային բուժօգնություն պահանջող դեպքերում՝ անկախ ախտորոշումից, քաղաքացիությունից և սոցիալական կարգավիճակից: Շտապ բժշկական օգնության կայանի (բաժանմունքի) բրիգադների կողմից հիվանդանոցային բժշկական կազմակերպություն տեղափոխված պացիենտները ենթակա են անհապաղ բժշկական քննության և, անհրաժեշտության դեպքում, պարտադիր հոսպիտալացման՝ անկախ տվյալ հիվանդանոցային բժշկական կազմակերպությունում ազատ տեղերի առկայությունից:

Վերակենդանացման միջոցառումներ և ինտենսիվ թերապիա պահանջող հիվանդությունների և վիճակների դեպքում հիվանդների բուժօգնությունն իրականացվում է անվճար՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2013թ. հոկտեմբերի 18-ի N65-Ն հրամանի 1 և 2 հավելվածներով սահմանված ցանկերի: Այս ցանկերից դուրս բնակչության պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացվում է համավճարային սկզբունքով՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի փետրվարի 7-ի թիվ 229-Ա հրամանով հաստատված հավելվածի:

Նշենք, որ «Շտապ բժշկական օգնության» միջոցով հիվանդի բժշկական կենտրոն տեղափոխումն անվճար բուժօգնության հիմք չէ: